Առաջին դեպքում, երբ անհրաժեշտ է որոշել, թե իրավահարաբերությունը մասնավոր, թե հանրային իրավական բնույթ է կրում, Գերմանիայի ՎԴ-ներն օգտվում են «հանրային/մասնավոր շահերի», «կողմերի հավասարության» և «նորմի վերաբերելիության» տեսություններից: Առաջին տեսության միջոցով դատարանները ստուգում են, թե արդյոք իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային, թե մասնավոր շահերի բավարարմանը, և ըստ այդմ որոշում են դրա իրավական բնույթը: Երկրորդ տեսության միջոցով նրանք ստուգում են, թե արդյոք վարչական մարմինը և մասնավոր անձը հավասար են եղել իրավահարաբերություններում, իրենց կամքով են մտել տվյալ իրավահարաբերության մեջ, թե մի կողմը մյուսի նկատմամբ իրականացրել է հանրային իրավական լիազորություններ, իսկ մյուս կողմը կրել է օրենքով սահմանված պարտականություններ: Երրորդ տեսության միջոցով դատարաններն ուսումնասիրում են վիճահարույց իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը, որպեսզի պարզեն, թե արդյոք այդ նորմերի գործողությունն ուղղված է բացառապես հանրային իրավական հարաբերությունների կարգավորմանը (օրինակ՝ տեսչական ստուգումների վերաբերյալ նորմերը), թե կարող են կիրառվել նաև մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում: Դատարանները հաճախ ստիպված են լինում օգտվել միաժամանակ մի քանի կամ նշված բոլոր տեսություններից՝ պարզելու համար իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ռեժիմը:

Իրավահարաբերության մասնավոր, թե վարչական լինելու հանգամանքից է կախված այդ իրավահարաբերություններից ծագող վեճերի ընդդատությունը՝ մասնավոր և հանրային իրավական գործեր քննող դատարաններին: Այս հարցի լուծման այլ մոտեցում է դրսևորել Ֆրանսիայի իրավական համակարգը: Ֆրանսիայում քաղաքացիական և ՎԴ-ների ընդդատության հարցերի վերաբերյալ վերջնական և պարտադիր որոշում է

կայացնում Կոնֆլիկտների դատարանը, որը կազմված է քաղաքացիական և ՎԴ-ների դատավորներից:

Այսպիսով, Եվրոպական երկրներում առկա են քաղաքացիական և վարչական իրավունքների ու դատական ընդդատության հարցերի լուծման զանազան մոտեցումներ, որոնց հիմնական նպատակն է ապահովել դատական պաշտպանության հիմնարար իրավունքի իրականացումը և այնպիսի իրավիճակների բացառումը, երբ վեճը ենթակա չէ քննության որևէ դատարանում: Հայաստանում վարչական իրավունքը և դատավարությունը դեռ կազմավորման փուլում են: Վարչական և քաղաքացիական իրավունքների տարանջատման մեխանիզմներ գոյություն չունեն, որի հետևանքով դատական պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ վեճի առկայության դեպքում բոլոր դատարանները հրաժարվում են գործի քննությունից՝ մերժելով արդարադատության իրականացումը և խախտելով դատարանի մատչելիության իրականացումը:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ մեծ թիվ են կազմում այն գործերը, որոնցով ՎԴ-ը մերժում է հայցադիմումի ընդունումը՝ պատճառաբանելով, որ հայցը ենթակա չէ ՎԴ-ում քննության, մինչդեռ ընդհանուր իրավասության դատարանները ևս հրաժարվում են քննել գործը՝ պատճառաբանելով, որ այն ենթակա է քննության ՎԴ-ում: Արդյունքում դատարանները չեն ապահովում դատարանի մատչելիության իրավունքը՝ խախտելով արդար դատաքննության առանցքային ասպեկտներից մեկը:

Դիտարկման արդյունքում ձեռք բերված տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում առկա են ոչ միայն վարչական և քաղաքացիական իրավունքների տարանջատման խնդիրը, այլև ՀՀ դատական ատյանները՝ ներառյալ բարձրագույն ատյանները, ինչպես նաև ՀՀ օրենսդիր մարմինը, բավարար և համակողմանի լուծում չեն տվել այդ խնդրին:

### Օրինակ՝

Ա. ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ ՎԴ ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին: Մասնավորապես խնդրվել է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցների կողմից ջրաչափ տեղադրելու, կապարակնքելու, հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում տեղեկանք կազմելու գործողությունները:

Վարչական դատարանը կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ հայցադիմումով ներկայացված պահանջները բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից և ՀՀ ՎԴՕ-ի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդդատյա չեն ՎԴ-ին: Ընկերությունը բողոք է ներկայացրել որոշման դեմ, սակայն բողոքը մերժվել է: Մերժվել է նաև ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը:

Ընկերությունը նույն պահանջը ներկայացրել է ընդհանուր իրավասության դատարան և ստացել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ պատճառաբանությամբ, որ ընդդատյա չէ ընդհանուր իրավասության դատարանին:

Նշված որոշմամբ Ղատարանը եկել էր այն եզրահանգման, որ Նախարարությունը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որն իրականացնում է վարչարարություն և Ընկերության կողմից ներկայացված պահանջը ծագել է հանրային իրավահարաբերություններից: Մերժվել են Ընկերության կողմից որոշման դեմ ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները:

Փաստորեն, նույն փաստերի առկայության պարագայում վճռաբեկ դատարանը հաստատել է, որ վեճը կրում է քաղաքացիաիրավական բնույթ, մինչև նույն ժամանակ հաստատել է, որ նույն վեճը կրում է վարչաիրավական բնույթ: Որևէ գիտության մեջ հնարավոր չէ այնպիսի իրավիճակ, որ որևէ դատողության այնդույնը և դրա հերքումը միաժամանակ ճիշտ լինեն: Հետևաբար, այս և այլ նմանատիպ բազմաթիվ գործերով, ՀՀ դատարանները հրաժարվել են արդարադատության իրականացումից, ինչը հանգեցնում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը:

Սա վառ օրինակ է այն բանի, որ «հանրային իրավահարաբերություն» եզրույթը միանշանակ չի ընկալվում նաև դատական ատյանների կողմից, քանի որ մի դեպքում դատական իշխանության մի թևը (քաղաքացիական գործեր քննող դատարանը) գտնում է, որ գործը հանդիսանում է հանրային իրավահարաբերությունից բխող և չի ընդունում վարույթ, իսկ մյուս թևը (ՎԴ-ը) գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ հանրային իրավահարաբերություն, ուստի գործը ենթակա չէ ՎԴ-ում քննության:

Այս ամենի արդյունքում տուժում է անձի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքը, քանի որ անձը փաստացի զրկվում է այդ իրավունքների իրացման բոլոր հնարավորություններից:

Մյուս կողմից, դիտարկվել են նաև գործեր, երբ երկու տարբեր անձանց նույնական պահանջներ միաժամանակ քննության են առնվել և՛ ընդհանուր իրավասության դատարանի, և՛ ՎԴ-ի կողմից:

## Օրինակ՝

Ա. և Բ. քաղաքացիներն աշխատել են ՀՀ ԿԱՀՊԾ համակարգում: ՀՀ ԿԱՊԵԿ նախագահի առանձին հրամաններով նրանք ազատվել են պաշտոնից: Ա. քաղաքացին հրամանը վիճարկել է ՎԴ-ում, մինչդեռ Բ. քաղաքացին՝ ընդհանուր իրավասության դատարանում: Երկու դատարաններն էլ անվավեր են ճանաչել ակտը և պարտավորեցրել վերականգնել նախկին աշխատանքում:

## **5. Վարույթի կարճումը հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերի առկայության դեպքում**

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ մի շարք դեպքերում, երբ դատարանը կարող է հայցադիմումի ընդունումը մերժել, քննում է գործը և արդյունքում վճռով կարճում է վարույթը ՎԴ-ին ընդդատյա չլինելու հիմքով: Թեև ՀՀ ՎԴՕ-ի 90-րդ հոդվածը նման հնարավորություն նախատեսում է, այնուամենայնիվ, այդ հիմքը պետք է վերաբերի այն դեպքերին, երբ գործի քննության ընթացքում հայցվորի կողմից հայցի առարկայի փոփոխությունը հանգեցնում է ընդդատության փոփոխության: Այլ դեպքերում, եթե ի սկզբանե հայցադիմումն ընդդատյա չէ ՎԴ-ին, ապա անհասկանալի է, թե ինչու է դատարանն այն վարույթ ընդունում: Նման պրակտիկան էապես ազդում է արդարադատության որակի վրա, քանի որ հանգեցնում է անհիմն ձգձգումների և արհեստականորեն մեծացնում դատարանի ծանրաբեռնվածությունը:

### **Օրինակ`**

Քաղաքացին ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունքի 22.12.08թ-ի եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջով դիմել է ՎԴ: Դատական քննությունը տևել է շուրջ երեք ամիս, որից հետո դատարանը կարճեց վարույթն այն պատճառաբանությամբ, որ ՎԴ-ին ընդդատյա չէ, քանի որ եզրակացությունը վարչական ակտ չէ:

## **6. Հայցադիմումը վարույթ ընդունելիս միասնական պրակտիկայի բացակայություն**

Դիտարկումները վկայում են, որ որոշ դեպքերում միևնույն հարցի վերաբերյալ դատավորները ցուցաբերում են տարբեր մոտեցում:

Այսպես, ՀՀ ՎԴՕ-ի 26-րդ գլուխը կարգավորում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը: Համաձայն ՎԴՕ-ի 151-րդ հոդվածի` վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն մի շարք դատական գործեր է ունեցել ընդդեմ տարբեր պաշտոնյաների` տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու և նրանց վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

ՀՀ ՎԴ-ի որոշ դատավորներ պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու պահանջն ընդունել են վարույթ, քննել և մերժել, որոշ մասն ընդհանրապես ի սկզբանե մերժել է վարույթ ընդունելը, իսկ որոշ մասը քննել է և միայն վճռով է մերժել պահանջը` պատճառաբանելով, որ ընդդատյա չէ իրեն:

## Առաջարկ

Օրենքով սահմանել «սխալ» հայցատեսակ ներկայացնելու իրավական հետևանքները՝ միաժամանակ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը:

«Սխալ» հայց ներկայացնելու դեպքում իրավական հետևանքների կիրառումը պետք է տեղի ունենա հայցը վարույթ ընդունելու փուլում:

Վերախմբագրել ՎԴՕ-ի 90-րդ հոդվածը, որը կբացառի ի սկզբանե ՎԴ-ին ոչ ընդդատյա գործերի վարույթ ընդունելը, իսկ հետագայում դրանց կարճումը:

Օրենքով նախատեսել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո հայցադիմումներ ներկայացնելու իրավական հետևանքը:

Բացառել ՎԴ-ի կողմից ՎԴՕ-ով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցադիմումների ընդունման մերժումը՝ ՎԴ-ին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

Ապահովել հայցադիմումների ընդունումը մերժելու պրակտիկայի միասնականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ պետք է սահմանի այն սկզբունքները, որոնց համաձայն քաղաքացիական և վարչական վեճեր քննող դատարանները պետք է որոշեն վեճի մասնավոր կամ հանրային իրավական բնույթը:

Ստեղծել վարչական և ընդհանուր իրավասության դատարանների կողմից վեճի բնույթի վերաբերյալ անհամաձայնության դեպքում առարկայական ընդդատության հարցի լուծման իրավական մեխանիզմ:

Քննարկել ՀՀ իրավական համակարգում վարչական կամ հանրային իրավական պայմանագրի ինստիտուտի ներդրման հարցը, որը լայն տարածում ունի Եվրոպական բազմաթիվ երկրներում, հատկապես՝ Գերմանիայում: Նման ինստիտուտի առկայության պարագայում իրավահարաբերությունները կարող են կարգավորվել պայմանագրով, սակայն պահպանելով իրենց հանրային իրավական բնույթը: Օրինակ, լիցենզիայի հիման վրա կնքված լիցենզիոն պայմանագիրը կհամարվի հանրային իրավական պայմանագիր, քանի որ դրա առարկան հանրային իրավական է (քաղաքաշինություն, ընդերքի օգտագործում և այլն), իսկ դրանից ծագող վեճերի քննությունը կիրականացվի ՀՀ ՎԴ-ում:


**ՔՆՈՒՄ 2. Հայցադիմումների տեսակներն ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, օրենսդրական բացերը և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ արդարադատության մատչելիության տեսանկյունից**

ՀՀ ՎՂՕ-ի 65-ից 68-րդ հոդվածները սահմանում են ՀՀ ՎԴ դիմելու համար սահմանված հայցատեսակները:

ՀՀ ՎՂՕ-ը նախատեսում է հայցի հետևյալ չորս տեսակները՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման:

Այսպես, վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող ակտը:<sup>8</sup> Պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից կամ որը նա չի ընդունել:<sup>9</sup> Գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:<sup>10</sup> Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող այլ հայց ներկայացնել: Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտն առ ոչինչ լինելը:

Սույն ծրագրի շրջանակներում դիտարկված գործերից 160-ի դեպքում ներկայացվել է վիճարկման հայց, 102-ի դեպքում՝ պարտավորեցման, 106-ի դեպքում՝ գործողության կատարման, իսկ 33-ի դեպքում՝ ճանաչման:<sup>11</sup>



Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ թվարկված հայցատեսակները և դրանց սահմանումները պրակտիկայում առաջացնում են դժվարություններ: Դրանց սահմանազատման արդյունավետ գործիքների և խորը մասնագիտական գիտելիքների բացակայության պայմաններում ներկայիս օրենսդրական կարգավորումը լիարժեքորեն չի ապահովում դատական պաշտպանության արդյունավետությունը: Մյուս կողմից, պրակտիկա-

<sup>8</sup> ՎՂՕ-ի 65-րդ հոդված

<sup>9</sup> ՎՂՕ-ի 66-րդ հոդված

<sup>10</sup> ՎՂՕ-ի 67-րդ հոդված

<sup>11</sup> Քանի որ որոշ դիտարկված գործերով ներկայացվել են մի քանի հայցատեսակներ, տվյալների հանրագումարը մեծ է դիտարկման ենթակա գործերի ընդհանուր թվից:



յում դժվարություններ են առաջանում վարչական ակտի տեսակների սահմանազատման առումով, և հաճախ են լինում դեպքեր, երբ անհրաժեշտ է լինում իրական պահանջը վերաձևակերպել՝ հարմարեցնելով օրենսգրքի պահանջներին:

### Օրինակ՝

ՀՀ ՎՂՕ-ի 65-րդ հոդվածը սահմանում է միայն միջամտող վարչական ակտը վիճարկելու հնարավորություն: Այնինչ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սահմանվում են վարչական ակտի երեք տեսակներ, դրանք են՝

- ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.
- բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որեւէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը.
- գ) զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

Այսինքն, եթե համայնքի ղեկավարի որոշմամբ օրինականացվել է անձի ինքնակամ կառույցը, սակայն չափերը սխալ են նշվել կամ անձը համաձայն չէ դրանց, ապա չի կարող վիճարկել, քանի որ վիճարկվող վարչական ակտն անձի համար կհամարվի բարենպաստ: Նույնը վերաբերում է նաև զուգորդվող վարչական ակտին:

Պարտավորեցման պարագայում կրկին օրենսդիրը նախատեսում է, որ պահանջը կարող է վերաբերել բարենպաստ վարչական ակտին: Սա ևս պրակտիկայում առաջացնում է խնդիրներ:

### Օրինակ՝

Ընկերությունը դիմել էր ՀՀ տնտեսական մրցակցության պաշպանության հանձնաժողովին՝ կոնկրետ ապրանքատեսակի ապրանքների ապրանքային շուկայի ուսումնասիրություն կատարելու պահանջով, սակայն ստացել էր մերժում: Ընկերությունը ներկայացրել էր պարտավորեցման հայց. պարտավորեցնել կատարել շուկայի ուսումնասիրություն և ընդունել համապատասխան վարչական ակտ:

Գործի քննության փուլում, երբ հարց էր ծագել, թե որքանով է կայացվելիք վարչական ակտն ընկերության համար բարենպաստ, ընկերու-

թյունը ներկայացրել էր հետևյալ պատճառաբանությունը. հաշվի առնելով, որ ընկերությունը հանդիսանում է տվյալ ապրանքային շուկայի սուբյեկտ և գործունեություն է ծավալում այդ ոլորտում, տվյալ ապրանքային շուկայի ուսումնասիրված լինելը ցանկացած պարագայում ընկերության համար հանդիսանում է բարենպաստ վարչական ակտ:

Սակայն ի վերջո, դատարանը հայցը մերժել էր՝ պատճառաբանելով, որ նշված հոդվածից հետևում է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար հիմք է հանդիսանում հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու կամ չընդունելու փաստի առկայությունը: Դատարանը գտել է, որ բացակայում է պարտավորեցման հայցը բավարարելու իրավական հիմքը, և առկա չէ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու հնարավորությունը, քանի որ ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների մասին որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով չի կարող հանդիսանալ բարենպաստ վարչական ակտ: Իհարկե դատարանը չի գնահատել, թե այդ պարագայում ինչ վարչական ակտ է հանդիսանում շուկայի ուսումնասիրությունը:

Խնդիրը կայանում է նրանում, որ պրակտիկայում երբեմն դժվար է որոշել ակտի տեսակը, քանի դեռ այն չի ընդունվել: Բացի այդ, թեև ՎՀՎՎ մասին օրենքի 53-րդ հոդվածում նշված են այն չափանիշները, որոնց հիման վրա որոշվում է վարչական ակտի տեսակը, իրավակիրառ պրակտիկայում միշտ չէ, որ հնարավոր է որոշել, թե կայացվելիք ակտն ինչպիսի բնույթ ունի: Իսկ վարչական դատավարության իմաստով ստացվում է, որ եթե անձը դիմել է դատարան պարտավորեցման հայցով, և գործի քննության ժամանակ ապացույցների հետազոտումից հետո պարզվի, որ իրականում ընդունվելիք վարչական ակտը զուգորդվող է, ապա դատարանը հայցը կարող է մերժել նշված պատճառաբանությամբ: Մինչդեռ, հայցատեսակների և դրանց սահմանափակ մեկնաբանության պարագայում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքը:

Բավականին լուրջ խնդիր է ձևավորվել նաև ճանաչման հայցերի հետ կապված: ՀՀ վարչական դատավարության 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-ից 67-րդ հոդվածներին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2010թ.-ի ՎԴ 1689/05/09 վարչական գործով որոշման համաձայն՝

«Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սերգեյ Մարդոյանի պահանջը ենթակա չէ դատարանում քննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ՎԴՕ-ի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել, կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ ՎԴՕ-ի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից կամ որը նա չի ընդունել:

ՀՀ ՎՂՕ-ի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 65-ից 67-րդ հոդվածներին համապատասխան:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ճանաչման հայց կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ ներկայացնել վիճարկման կամ պարտավորեցման հայց:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ հնարավոր էր և չէր բացառվում Սերգեյ Մարդոյանի կողմից Քաղաքապետարանի 20.03.2009 թվականի թիվ 18-08/2-4283 գրությունը որպես միջամտող վարչական ակտ, վերացնելու կամ այն փոփոխելու, ինչպես նաև շինարարության թույլտվությունը տրամադրելու և դրա հիման վրա կառուցապատման իրավունքը ճանաչելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայցերի ներկայացման հնարավորությունը:

Ընդ որում նման դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանում ձևավորված պրակտիկա է: Այսպես, 25.12.2009թ.-ի թիվ ՎՂ/1943/05/09 գործով որոշման համաձայն. «Այսպիսով, վերոհիշյալ երկու հոդվածների համեմատական վերլուծությունից հետևում է, որ ճանաչման հայց կարող է ներկայացվել այն դեպքում, երբ պարտավորեցման հայց ներկայացնել հնարավոր չէ:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ չի բացառվել ևս Այվագյանի կողմից Քաղաքապետարանին վիճելի կցակառույցը և անտրեսուրը օրինականացնելու, զբաղեցրած հողատարածքը՝ վարձակալության հիմունքներով տրամադրված լինելու վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու հայցի հարուցման հնարավորությունը»:

Նմանատիպ է ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009թ.-ի թիվ ՎՂ/5557/05/08 վարչական գործով որոշումը:

Խնդիրը կայանում է նրանում, որ որևէ պարագայում ՀՀ ՎՂՕ-ի 68-րդ հոդվածի առաջին մասի խախտմամբ հայց ներկայացնելը չի կարող գործի վարույթի կարճման հիմք հանդիսանալ: Օրենսդիրը ՀՀ ՎՂՕ-ի որևէ դրույթով չի նախատեսել նշված նորմի խախտմամբ հայց ներկայացնելու իրավական հետևանքները: Ենթադրենք, անձը կարող էր ներկայացնել վիճարկման հայց, սակայն ներկայացրել է ճանաչման հայց, սակայն դա որևէ հետևանք չունի. հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերում, ինչպես նաև գործի վարույթը կարճելու վերաբերյալ հոդվածներում այդ հիմքը նախատեսված չէ: Նման պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված պրակտիկան հանգեցնում է անձի՝ ՀՀ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի տարր հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքի խախտմանը, քանի որ սահմանափակվում է անձի՝ դատարան դիմելու իրավունքն օրենքով չնախատեսված հիմքերով և զուտ ձևական նկատառումներով: Այս առումով, առկա է օրենքի բաց՝ սխալ հայց ներկայացնելու հետևանքները չնախատեսելու առումով:

Որոշակի խնդիր է առկա նաև վճարման կարգադրությունների հետ կապված գործերով: Նախ, անհասկանալիորեն վճարման կարգադրության վարույթում պատասխանողի համար նախատեսվում է միայն հակընդդեմ

հայցի ներկայացում՝ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, որը նախատեսում է նաև առարկության ներկայացում: Բավականին հաճախ են հանդիպում դեպքերը, երբ իրականում տվյալ դեպքում պետք է ներկայացվի առարկություն: Օրինակ, անձն արդեն կատարել է հարկերի վճարումները, սակայն հարկային մարմինը վճարման կարգադրություն է ներկայացրել գումարի բռնագանձման պահանջով: Անձը չի կարող ներկայացնել առարկություն՝ հայտնելով, որ կատարել է վճարում: Առավել հատկանշական է, որ ՀՀ ՎՊՕ-ի 158-րդ հոդվածը սահմանում է, որ հակընդդեմ հայցը պետք է լինի վիճարկման հայց: Այսպես.«Վճարման կարգադրությունը ներառում է՝

2) կարգադրություն՝ վճարման կարգադրությունը ստանալու կամ սույն օրենսգրքի համաձայն՝ պատշաճ ծանուցված համարվելու պահից երկու շաբաթվա ընթացքում կատարելու հետևյալ գործողություններից որեւէ մեկը.

ա. կատարել վճարման պահանջը, եթե պատասխանողը պահանջը հիմնավորված է համարում,

բ. ներկայացնել հակընդդեմ հայց՝ վարչական ակտը վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պատասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի:

Այսինքն, բացի այն, որ անձը պետք է ներկայացնի միայն վիճարկման հակընդդեմ հայց: Այնինչ, օրինակ նկարագրված դեպքում դա ուղղակի անհնար է, քանի որ անձը ստուգման ակտի հիման վրա վճարել է հարկերը, հետևաբար, համաձայն է եղել այդ ակտի հետ, սակայն ակտի հիման վրա գումարի բռնագանձման պահանջ ներկայացվելու դեպքում պարտավոր է ներկայացնել ստուգման ակտը վիճարկելու հայց:

Բավականին հաճախ է հանդիպում նման իրավիճակ պետավտոտեսչության հետ կապված դեպքերում. մասնավորապես, բազմաթիվ դեպքերում անձը տուգանքի գումարը վճարելուց հետո կտրոնը չի ներկայացնում պետավտոտեսչություն, և վերջինս ներկայացնում է տուգանքի գումարը բռնագանձելու վճարման կարգադրության դիմում:

Պրակտիկայում տրվել է հետևյալ լուծումը . անձը ներկայացնում է գործողության կատարման կամ ճանաչման հակընդդեմ հայց՝ պատճառաբանելով, որ ՀՀ ՎՊՕ-ի 158-րդ հոդվածն ուղղակիորեն հակասում է ՀՀ - ՎՊՕ-ի ընդհանուր դրույթներին, հետևաբար չի գործում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ՎՊՕ-ի 3-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու ՎՊ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, 2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն:

Նշված հոդվածն իրավունք է նախատեսում դատարան դիմելու բոլոր այն դեպքերում, երբ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվում են անձի իրավունքները կամ

վերջինիս վրա դրվում է ոչ իրավաչափ պարտականություն՝ չնախատեսելով որևէ բացառություն:

Այսինքն, ստացվում է, որ Վարչական դատավարության օրենսգրքի վճարման կարգադրության կարգավորմանը նվիրված բաժինը նախատեսում է վճարման կարգադրության դեմ առարկելու մեկ տարբերակ՝ վարչական ակտը բողոքարկելու վերաբերյալ հակընդդեմ հայցադիմումի ներկայացում, իսկ ընդհանուր մասը նման բացառություն չի նախատեսում: Ստացվում է, որ այս պարագայում անձն իր իրավունքները պաշտպանելու որևէ ընթացակարգ չի ունենում, սակայն իրականությունն այն է, որ անձը որևէ խախտում թույլ չի տվել և ժամանակին վճարել է տուգանքի գումարը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հինգերորդ մասի համաձայն՝ նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները: Հետևաբար, ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ ՎՊՕ-ի 68-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ:

Ներկայացվում է պահանջ Ոստիկանության գործողությունը՝ ուղղված վարչական տուգանքի գումարը հնգապատկելուն, ճանաչել ոչ իրավաչափ, քանի որ տուգանքի գումարը ժամանակին վճարվել է, և կիրառելի չէ ՀՀ ՎԻՎՕ-ի 305-րդ հոդվածը, հետևաբար Ոստիկանության գործողությունները՝ ուղղված վարչական տուգանքի գումարը հնգապատկելուն և այդ կապակցությամբ հայցադիմում ներկայացնելուն, պետք է ճանաչվեն ոչ իրավաչափ:

Մեծամասամբ, ՀՀ ՎՊ-ի դատավորների կողմից այս պատճառաբանությունն ընդունվում է, սակայն խնդիրը մնում է բաց և կրկին ստացվում է, որ օրենսդրական բացի հետևանքով խախտվում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

## Առաջարկ

Նախատեսել սխալ հայց ներկայացնելու հետևանքները: Եթե ՎՊ-ը վարույթ է ընդունել և քննել սխալ հայց, ապա ճիշտ հայցը ներկայացնելու ժամկետները պետք է համարվեն վերականգնված:

Նախատեսել առարկության ներկայացման հնարավորություն այն դեպքերում, երբ անձը տուգանքը վճարելու համար օրենքով նախատեսված ժամկետներում վճարել է այն:

Միջոցներ ձեռնարկել դատավորների և փաստաբանների՝ վարչական հայցերի վերաբերյալ գիտելիքների խորացման ուղղությամբ:

Նախատեսել բոլոր վարչական ակտերի համար բողոքարկելու հնարավորություն. ՎՊՕ-ի 65-րդ հոդվածը լրացնել հետևյալ արտահայտությամբ «...կամ զուգորդվող վարչական ակտի՝ անձի համար ոչ բարենպաստ (միջամտող) դրույթները»:

### **ԳԼՈՒԽ 3. Ապացույցները վարչական դատավարությունում**

#### **ա. կողմի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ. օրենսդրական բացը և գործող պրակտիկան**

ՀՀ ՎԴՕ-ի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր ապացույցները և իրեղեն ապացույցները:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի՝ ՎԴՕ-ի հիշյալ հոդվածն ապացույցների շարքից բացառել է (չի նախատեսել) գործին մասնակցող անձանց ցուցմունքները որպես ապացույցի տեսակ:

Ճիշտ է, ՀՀ ՎԴՕ-ի 34-րդ հոդվածն անուղղակիորեն նախատեսում է կողմի՝ ցուցմունք տալու հնարավորության մասին, մասնավորապես սահմանված է, որ՝ Դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է կարգադրել, որ կողմը (կողմերը) ցուցմունք տա (տան) վիճելի փաստի վերաբերյալ՝ վկայի ցուցմունքի համար սահմանված կանոններով, սակայն ՀՀ ՎԴՕ-ի 22-րդ հոդվածում այդ ցուցմունքն ապացույցի տեսակ չհամարվելու պայմաններում նման ցուցմունքի ստացումը դառնում է ինքնանպատակ:

Ընդ որում, հարկ է ուշադրություն դարձնել, որ ՀՀ ՎԴՕ-ի 34-րդ հոդվածը հստակ տարանջատում է կողմի ցուցմունքը վկայի ցուցմունքից՝ սահմանելով միայն, որ կողմի ցուցմունքը ստացվում է վկայի ցուցմունքի համար նախատեսված կանոններով:

Միևնույն ժամանակ, ՀՀ ՎԴՕ-ի 6-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Նման պարագայում կողմի՝ անձամբ ներկայանալու պարտականությունը չի կարող լինել ինքնանպատակ. բնականաբար, դատարանը պետք է լսի կողմի բացատրությունները՝ ցուցմունքը: Հետևաբար, կրկին առկա է կողմի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ դիտելու խնդիրը:

Այսպիսով, ստացվում է, որ մի կողմից վարչական դատավարությունը սահմանում է կողմի ցուցմունքի ստացման հնարավորությունը և կարծես թե այն դիտում է որպես ապացույց (հակառակ դեպքում ուղղակի անիմաստ կլինի դրա ստացումը), մյուս կողմից ապացույցների տեսակները սահմանելիս դրանց շարքում չի նախատեսել այդ ապացույցի տեսակը: Նման իրավական թերի կարգավորումը կարող է առաջացնել և գործնականում առա-

ջացնում է իրավական անորոշություն՝ կողմի ցուցմունքը վճռի հիմքում դնելու կամ չդնելու կապակցությամբ:

Կողմի ցուցմունքը իրավունքի տեսության մեջ իրավացիորեն համարվում է ապացույցի տեսակ, քանի որ միայն կողմը կարող է հայտնել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող է այլ ապացույցների միջոցով հնարավոր չլինի ստանալ:

Գործին մասնակցող անձանց ցուցմունքներն անձնական ապացույցների տեսակներից մեկն են, որոնց առանձնահատկությունը կայանում է նրանում, որ փաստերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են դատարանին այն անձանց կողմից, ովքեր շահագրգռված են գործի ելքով:

Կողմերը հանդես են գալիս որպես վիճելի իրավահարաբերության մասնակից և իրավաբանորեն շահագրգռված են գործի ելքով: Նրանք միաժամանակ հանդես են գալիս և՛ 1) որպես անձինք, որոնք մասնակցում են գործում, որոնց գործողություններից է կախված դատավարության ծագումը, զարգացումը և դադարումը, և՛ 2) որպես ապացույցների աղբյուրներ:

Կողմերի ցուցմունքների հետ կապված վարչական դատավարությունում առաջանում է մեկ այլ խնդիր: Վարչական դատավարությունում կողմերից մեկը վարչական մարմինն է, առավել հաճախ՝ պետական մարմինը: Որպես կողմ ցուցմունք տալու համար կարող է ներկայանալ համապատասխան պետական մարմնի ղեկավարը, քանի որ նա է ի պաշտոնե ներկայացնում այդ մարմինը:

Այսպես, մի շարք հեղինակներ արդարացիորեն արտահայտել են հետևյալ կարծիքը. «Գործին մասնակցող անձանց թվին են դասվում նաև դատախազը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Դատախազը որպես գործին մասնակցող անձ, ապացուցողական տեղեկություններն անձամբ ստանում է այլ աղբյուրներից: Նա չի հանդիսանում վիճելի նյութական իրավահարաբերությունների սուբյեկտ և չի իրականացնում իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ մինչև դատավարության ծագումը: Հետևաբար, նա չի հանդիսանում փաստերի մասին տեղեկություններ կրող: ... Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները դատավարությունում հանդես են գալիս իրենց ներկայացուցիչների միջոցով: Ներկայացուցիչները չեն հանդիսանում ապացույցների աղբյուրներ, և նրանց բացատրությունները չի կարելի հավասարեցնել կողմերի և երրորդ անձանց բացատրություններին»:

Տվյալ դեպքում, գործին մասնակցող անձանց կողմից տրված ցուցմունքներն ըստ էության հավասարեցված են վկաների կողմից տրված ցուցմունքներին՝ պատասխանատվության և ապացույցների աղբյուրի տեսանկյունից: Եթե գործին մասնակցող անձի ներկայացուցիչը կարող է ցուցմունք տալ փաստի մասին, ապա նույն տրամաբանությամբ կարող է վկայի ներկայացուցիչը ցուցմունք տալ փաստի մասին, ինչն անթույլատրելի է:

Դիտարկումները ցույց են տվել, որ պրակտիկայում շատ են այն դեպքերը, հատկապես հարկային մարմնի հետ վեճերով, երբ դատարանը վճռի հիմքում դնում է ստուգումն իրականացրած տեսուչների՝ որպես հարկային մարմնի ներկայացուցչի բացատրությունները:

## Օրինակ՝

Վարչական դատարանի 23.07.2010թ.-ի թիվ ՎԴ/5276/05/09 վարչական գործով վճռի հիմքում որոշ հանգամանքների հաստատման համար դրվել են տեսուչների բացատրությունները՝ առանց վերջիններիս վկայություններով, այսինքն, նրանք բացատրություն են տվել որպես ներկայացուցիչ, և դատարանն այդ բացատրությունը դիտել է որպես ապացույց:

Վարչական դատարանի 18.05.2009թ.-ի թիվ ՎԴ/5029/05/08 վարչական գործով վճռի հիմքում ևս դրված են տեսուչների՝ տեսչության ներկայացուցիչների բացատրությունները որպես ապացույց:

Հարկ է նկատի ունենալ, որ տեսուչի՝ որպես ներկայացուցչի բացատրությունները, ՎԴՕ-ի համաձայն, ապացույցի տեսակ չեն հանդիսանում, ինչպես և ապացույցի տեսակ չեն ընդհանրապես դատավարության կողմերի ներկայացուցիչների բացատրությունները: Ապացույց պետք է հանդիսանա կողմի ցուցմունքը: Հետևաբար, որպես կողմի՝ վարչական մարմնի ցուցմունք կարող է համարվել վարչական մարմնի ղեկավարի ցուցմունքը, իսկ տվյալ վարչական մարմնի այլ աշխատակցի ցուցմունքը կարող է դրվել վճռի հիմքում, եթե նա ներգրավվի դատավարությանը որպես վկա և նախագգուշացվի ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

Ուստի տվյալ դեպքում առկա է մի կողմից իրավակիրառ պրակտիկայի բաց այն իմաստով, որ դատարանը վարչական մարմնի որևէ աշխատակցի բացատրությունները դնում է վճռի հիմքում՝ միևնույն ժամանակ չհստակեցնելով նրա բացատրությունների ապացուցողական նշանակությունը, մյուս կողմից առկա է օրենսդրական բաց՝ կողմի ցուցմունքը չի հանդիսանում ապացույցի տեսակ:

## **բ. ապացուցման բեռի բաշխումը, առանձնահատկությունները վարչական դատավարությունում և գործող պրակտիկան**

«ՎԴՕ-ի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:»:

«ՎԴՕ-ի 26-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

2. Ապացուցման բեռը կրում է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցներ ներկայացնելու պարտականություն կրող կողմը:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը, կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել,



կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:»:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ապացուցման բեռը կրում է իր պահանջները կամ առարկությունները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող կողմը, իսկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը) կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: ՀՀ ՎԴՕ-ի 25-րդ հոդվածում տրված ձևակերպումը որոշ առումով հակասության մեջ է 26-րդ հոդվածի հետ, քանի որ այն բոլոր դեպքերում, երբ անձը վիճարկում է պետական մարմնի ակտը, այդ ակտի հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն, եթե ստուգման ակտ է կայացվել, և անձը ենթարկվել է պատասխանատվության հարկային օրենսդրության խախտումներ թույլ տալու համար, ապա այդ խախտում թույլ տալու հանգամանքը, խախտման չափերի և դրան առնչվող բոլոր փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը՝ չնայած, որ հարկատուն է պահանջ ներկայացրել ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով: Նման պարագայում, չնայած 25-րդ հոդվածի պահանջին՝ հիմնավորել իր պահանջների հիմքում ընկած հանգամանքները՝ ապացուցման բեռն ամբողջությամբ կդրվի վարչական մարմնի վրա:

Այս առումով առավել հաջող է վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված ապացուցման բեռի բաշխման կանոնը, համաձայն որի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Այսինքն, անձը պետք է կրի ոչ թե իր պահանջների հիմքում ընկած բոլոր հանգամանքների, այլ իր համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը:

### Օրինակ՝

Տվյալ գործով անձը ներկրել է որոշակի քանակությամբ ապրանք, որի արդյունքում հարկային մարմնի գնահատմամբ անձն իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Հարկային տեսուչների այցելությունների ընթացքում անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներկրված ապրանքները, այդ թվում նաև՝ 1.410 կիլոգրամ մանկական տակդիրը, չեն ներկայացվել հարկային տեսուչներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը համարել է, որ ապրանքի քանակի վերաբերյալ ապացուցման բեռը կրում է անձը: Համաձայն որոշման. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1.410 կիլոգրամ մանկական տակդիրը գտնվում է եղիտա Կյուրեղյանի տիրապետության ներքո, սակայն դրա առկայության վերաբերյալ ապացույցը չի ներկայացվել ինչպես հարկային տեսուչներին, այնպես էլ Դատարանին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եղիտա Կյուրեղյանը պարտավոր էր Դատարանին ներկայացնել նշված ապրանքի՝

տվյալ պահին առկա քանակի վերաբերյալ ապացույցները: Մինչդեռ, սույն գործում այդպիսի ապացույցներ առկա չեն, որպիսի հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ Էդիտա Կյուրեղյանը 1.410 կիլոգրամ մանկական տակդիրը Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել իրացնելու և շահույթ ստանալու նպատակով» (05.02.2010թ.-ի թիվ ՎԴ/0047/05/09 վարչական գործով որոշում): Խնդիրը կայանում է նրանում, որ եթե ստուգման ակտում արձանագրվել է ապրանքի քանակը, ապա ապրանքի քանակի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը պետք է կրի վարչական մարմինը, առավել ևս, որ դա կարող է հաստատվել մաքսային մարմիններից համապատասխան տեղեկատվությունը ստանալով: Վկայակոչված իրավիճակը հիմնավորում է, որ անձը վարչական ակտը վիճարկելիս պետք է կրի ոչ թե իր պահանջների հիմքում ընկած հանգամանքների ապացուցման բեռը, այլ իր համար բարենպաստ հանգամանքների: Օրինակ, նշված դեպքում, եթե անձը նշեր, որ իրականում ներկրել է ավելի քիչ, օրինակ, 50 կգ, այդ հանգամանքի ապացուցման բեռն իրավացիորեն կդրվեր անձի վրա:

Մեկ այլ նմանատիպ դեպք. ստուգման ընթացքում ընկերությունը տեսչությանը չի ներկայացրել ապրանքի պակասող քանակը: Կրկին ՀՀ վճռաբեկ դատարանը համարել է, որ ապացուցման բեռը պետք է կրեր ընկերությունը:

«Այսպես՝ խողովակների՝ տվյալ պահին առկա քանակի վերաբերյալ ապացույցները պետք է ներկայացնեն հենց Ընկերությունը, քանի որ խողովակների պակասող քանակությունը գտնվել է Ընկերության տիրապետության ներքո: Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ հարկային ստուգման ընթացքում պակասող ապրանքը չի ներկայացվել հարկային տեսուչներին, ինչպես նաև չի ներկայացվել որևէ ապացույց դրանց բացակայության կամ հետագա ձակատագրի վերաբերյալ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ ապացույցները Ընկերության կողմից Ղատարանին չներկայացնելու պայմաններում դրանց չներկայացման բացասական հետևանքները կրում է Ընկերությունը» (ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010թ.-ի թիվ ՎԴ/5165/05/08 վարչական գործով որոշում): Կրկին խոսքը վերաբերում է ստուգման ակտի հիմքում ընկած հանգամանքներին, որոնց ապացուցման բեռը պետք է կրի տեսչությունը, հակառակ պարագայում ստացվում է, որ անձը պետք է հիմնավորի, թե որքան է կազմում պակասող ապրանքը, այն դեպքում, երբ հենց այդ հիմքով է կազմվել ստուգման ակտը, հետևաբար, ստուգման ակտում պետք է արդեն իսկ արտացոլված լինեին այդ տվյալները: Հակառակ մեկնաբանության պարագայում ստուգման ակտը զուրկ է փաստական հիմնավորումից:

Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. դատարանը ստուգում իրականացնող սուբյեկտը չէ և դատական քննության ժամանակ դատարանը չպետք է կրկին ստուգում իրականացնի, դատարանը ընդամենը պետք է ստուգի առկա ստուգման ակտի իրավաչափությունը, ուստի պետք է պարզի, թե արդյոք ստուգում իրականացնողները վեր են հանել բոլոր փաստական հանգամանքները, թե՛ ոչ: Սակայն նշված օրինակում, դրա փոխարեն, անձը պարտավորվել է ներկայացնել ապացույցներ ստուգման ակտի հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ, մասնավորապես, պակասորդի վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010թ.-ի թիվ ՎԴ3/0310/05/09 վարչական գործով որոշման համաձայն. «Մինչդեռ Ղատարանը 30 քմ մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ 25.07.2002 թվականի հայտարարության, «Հարկ վճարողի (պաշտոնատար անձի) ստորագրությունը» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունը Աիդա Առաքելյանին պատկանելու փաստի ապացուցման բեռը ՀՀ ՎԴՕ-ի 26-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով դրել է Տեսչության վրա, ինչի հետևանքով վերջինս կրել է փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հայտարարությունում առկա ստորագրությունն Աիդա Առաքելյանին պատկանելու փաստի առկայության կամ բացակայության ապացուցման բեռը կրում է Աիդա Առաքելյանը, քանի որ վերջինս է վիճարկել այդ փաստը և պարտավոր էր ներկայացնել իր առարկությունները հիմնավորող ապացույցներ: Հետևաբար, վիճարկվող փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները պետք է ընկնեն Աիդա Առաքելյանի վրա, այսինքն՝ պետք է հաստատված համարվի, որ 30 քմ մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ 25.07.2002 թվականի հայտարարությունը ստորագրել է Աիդա Առաքելյանը»:

Այս դեպքում, դատարանն իրավացիորեն ստորագրությունն անձին պատկանելու փաստի ապացուցման բեռը դրել է անձի վրա՝ հաշվի առնելով, որ նա վիճարկել է այդ հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2009թ.-ի թիվ ՎԴ/0222/05/09 վարչական գործով որոշման համաձայն՝

«Միաժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Սույն գործով Ղատարանի վճռով կարևորվել էր այն փաստը, թե ապրանքները խանութ-սրահում ստացվելու կոնկրետ ժամանակն անհայտ է, որպիսի փաստն էլ նշված չէ ակտում և չի ապացուցվել վարչական մարմնի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված փաստի կարևորումն էական նշանակություն կարող էր ունենալ միայն այն պարագայում, եթե ապրանքները խանութ-սրահում ստացվել են հենց գույքագրման օրը և դեռևս վաճառքի չեն հանվել ու ապրանքներն ստանալու օրն էլ դեռևս չի ավարտվել: Մինչդեռ, սույն գործով Կոոպերատիվը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով՝ վարչական վարույթի ընթացքում, և ՀՀ ՎԴՕ-ի 25-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վարչական գործի քննության ընթացքում, կրելով ա-

պացուցման պարտականություն, չի ապացուցել իր համար բարենպաստ հանգամանքները»:

Նշված դեպքում ակնհայտ է, որ անձի վրա դրվել է այնպիսի հանգամանքի ապացուցման բեռ, որն անձի համար բարենպաստ է:

Նշված օրինակները և հիմնավորումները վկայում են այն մասին, որ վարչական մարմնի ակտերը, գործողությունները, անգործությունը վիճարկելիս անձի վրա պետք է դրվի ոչ թե իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ցանկացած հանգամանքի ապացուցման բեռ, այլ այն հանգամանքների, որոնք բարենպաստ են անձի համար:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ պրակտիկայում դատարանները ոչ միշտ են պարզում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և բաշխում ապացուցման բեռը: Այսպես, դիտարկման ենթակա գործերի 22.6 տոկոսի դեպքերում (80 գործ) դատավորները թերացել են պարզել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և բաշխել ապացուցման բեռը: 181 գործով դատարանները ձևականորեն են կատարել իրենց պարտականությունը՝ նշելով, որ «կողմը պարտավոր է ապացուցել իր պահանջների հիմքում ընկած փաստական հանգամանքները» կամ «կողմը պարտավոր է ապացուցել իր պահանջները՝ ՀՀ ՎՂՕ-ի 25-րդ և 26-րդ հոդվածներին համապատասխան»: Այս հարցի առնչությամբ, դիտորդները պարզել են, որ այս պարտականության պատշաճ կատարումը պայմանավորված է նաև դատավորի անձով: Մասնավորապես, ՎՂ-ի սակավ թվով դատավորներ (օրինակ՝ դատավոր Ա. Առաքելյանը), իրենց իսկ ձևավորված պրակտիկայի համաձայն, որպես կանոն հանգամանորեն պարզել են ապացուցման ենթակա փաստերը և հստակորեն բաշխել բեռը: Ի հակադրություն, մեծ թիվ են կազմում այն դատավորները, որոնք ըստ էության չեն կատարում օրենքով դրված պարտականությունը, չեն մատնանշում այն փաստերը, որոնք էական են գործի լուծման համար կամ չեն պահանջում ներկայացնել այդ փաստերի ապացույցները:

Մյուս կողմից, դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ դատարանը ապացուցման բեռը ճիշտ չի բաշխել 19 գործով: Ավելին, դիտարկված 119 գործերով դատարանն անգամ չի պարզել վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ դատարանն իր նախաձեռնությամբ պահանջել է անհրաժեշտ ապացույցներ 43 գործով: 5 գործով հայցվորը դատարանից պահանջել է իրականացնել ի պաշտոնե հանգամանքներ պարզելու պարտականությունը: 72 գործով վարչական մարմինը ներկայացրել է իր տիրապետության տակ գտնվող ապացույցները:

ՎՂՕ-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio): Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ ՎՂՕ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայաց-

նել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ ՎԴՕ-ի 6-րդ հոդվածի ուժով ՎԴ-ի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքին:

Մասնավորապես, 17.04.2009թ.-ի թիվ ՎԴ3/0390/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ ՎԴՕ-ի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Ղատարանի իրավունք է, սակայն Ղատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Ղատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունի Ռաֆիկ Պետրոսյանի կողմից սոցիալական ապահովության վճարները վճարելու փաստի պարզումը, հետևաբար միայն նշված փաստը պարզելուց հետո դատարանը գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ կարող է հաստատել տվյալ փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Մինչդեռ, սույն գործով Ղատարանը, չպարզելով սոցիալական ապահովության վճարները Ռաֆիկ Պետրոսյանի կողմից վճարված կամ չվճարված լինելը, միայն Արարատի ՏՀՏ պետի՝ մնացորդի վերաբերյալ տեղեկանք-հաշվարկի հիման վրա հաստատված է համարել, որ Ռաֆիկ Պետրոսյանը 20.11.2008 թվականի դրությամբ ունի 461.001 ՀՀ դրամ գումարի չափով հարկային պարտավորություն»:

12.03.2010թ.-ի թիվ ՎԴ/2521/05/08 վարչական գործով որոշման համաձայն՝

«Կրկին վկայակոչելով ՀՀ ՎԴՕ-ի 6-րդ հոդվածի վերաբերյալ նշված վերլուծությունը ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն վարչական գործով Ղատարանը, չկիրառելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Ղաշնության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու» համաձայնագիրը, արդյունքում չի պարզել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, այն է՝ Ռուսաստանի Ղաշնության դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» լի-

24.07.2009թ.-ի թիվ ՎԴ/3881/05/08 վարչական գործով որոշման համաձայն՝

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունի Ռուբեն Բարեղամյանի կողմից քաղաքական զսպվածության սկզբունքի խախտման փաստի պարզումը: Մինչդեռ Դատարանը, առանց պարզելու և հաստատված համարելու քաղաքական զսպվածության սկզբունքի խախտման փաստը, հայցը մերժելիս հիմնվել է բացառապես Կադաստրի աշխատակազմի ղեկավարի՝ դատարանում տրված հայտարարության վրա, որով նա հայտնել է, որ տեղյակ է եղել, որ Ռուբեն Բարեղամյանը մասնակցել է չիրազեկված հանրահավաքներին»:

25.12.2009թ.-ի թիվ ՎԴ/5980/05/08 վարչական գործով որոշման համաձայն՝

«Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունի ժառանգության բացման ժամանակ՝ 15.03.1982 թվականին, Անուշ Հովհաննիսյանին պատկանող 13,64 քմ մակերեսով սենյակը որպես ժառանգության զանգված գոյություն ունենալու փաստը:

Մինչդեռ, սույն գործով Դատարանը չպարզելով ժառանգության բացման ժամանակ վեճի առարկա 13,64 քմ մակերեսով սենյակի առկայության փաստը, միայն հիմք ընդունելով Հովհաննես Պողոսյանի կողմից ժառանգության ընդունելու փաստը՝ բավարարել է հայցապահանջը»:

27.05.2010թ.-ի թիվ ՎԴ/7722/05/08 որոշման համաձայն.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե որն է սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, և որ կողմը պետք է կրի այդ փաստի ապացուցման դատավարական բեռը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Սույն վարչական գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի պիտանիության ժամկետն անցած ապրանքը վաճառելու նպատակով՝ հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքը, որը ապացուցելու պարտականությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ուժով դրված է վարչական մարմնի վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 23.04.2009 թվականին նշանակված նախնական դատական նիստին Դատարանը, ապացույցների բեռի բաշխման կանոնին համապատասխան, պատասխանողին հանձնարարել է

ներկայացնել ապացույցներ, մասնավորապես պատասխանողի կողմից վկայակոչած այն լուսանկարները, որոնք վկայում են, որ ժամկետանց ապրանքը ստուգման ժամանակ գտնվել է հաճախորդների համար տեսանելի և մատչելի վայրում: Նշված ապացույցը ներկայացնելու համար նախնական դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 12.09.2009 թվականին՝ ժամը 16.00-ին: Նշանակված նախնական դատական նիստին պատասխանողի կողմից պահանջված ապացույցը չի ներկայացվել այն պահպանված չլինելու պատճառաբանությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն ի պաշտոնե ՀՀ ՎԴՕ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պարզել է սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ այն ապացուցելու պարտականությունն օրենքի ուժով պատասխանող կողմի վրա դնելով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն այդ փաստի պարզման համար ողջամիտ միջոցներ է ձեռնարկել և վարչական մարմնի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող փաստը չապացուցելու պայմաններում հաստատված համարել, որ այն բացակայում է»:

**գ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պրակտիկ կիրառությունը և Վարչական ակտի իրավաչափությանը վստահելու իրավունքի պաշտպանությունը ՀՀ վարչական արդարադատությունում**

ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009թ.-ի թիվ ՎԴ/1513/05/09 վարչական գործով որոշման համաձայն՝ «Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պատասխանողի վրա դրված է հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտավորություն, որի չպահպանումը վերջինիս համար կարող է առաջացնել բացասական հետևանքներ, մասնավորապես, հայցադիմումի պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում: Այդ պահանջը հետապնդում է հայցապահանջի վերաբերյալ պատասխանողի դիրքորոշմանը տեղեկանալու նպատակ, այսինքն՝ այն վերաբերում է միմիայն պատասխանողին, քանի որ հայցվորի դիրքորոշումն ի սկզբանե դատարանին հայտնի է: Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ Ոստիկանությունը չի ներկայացրել հակընդդեմ հայցադիմումի պատասխան, ինչը Դատարանը գնահատել է որպես Ոստիկանության կողմից Քննչականության հետ հարաբերակցության վկայակոչած փաստերի ընդունում: Մինչդեռ, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ոստիկանության ներկայացուցիչը մասնակցել է գործի քննությանը և առարկել է հակընդդեմ հայցադիմումի դեմ՝ ներկայացնելով բանավոր հիմնավորումներ»:

Վճռաբեկ դատարանի կողմից տրված նման մեկնաբանության պայմաններում ստացվում է, որ բոլորովին անհրաժեշտ չէ պատասխան ներկայացնելը, բավական է, որպեսզի պատասխանողը ներկայանա դատական նիստերից որևէ մեկին և հայտարարի, որ առարկում է հայցի դեմ:



Հետևաբար, վճռաբեկ դատարանի մեկնաբանության պայմաններում ՀՀ ՎԴՕ-ի 83-րդ հոդվածի ութերորդ կետը չի գործում այն դեպքերում, երբ անձը գործի քննության որևէ փուլում բանավոր կամ գրավոր առարկել է հայցադիմումի դեմ:

Նման մոտեցումը լիարժեքորեն չի բխում հոդվածի բովանդակությունից և, փաստորեն, իմաստագրկում է պատասխան ներկայացնելու դատավարական պարտականությունը և այս պարտականության չկատարման դեպքում թողնում դատարանի կողմից լայն եզրակացությունների ու մեկնաբանությունների կատարման հնարավորություն:

### **Առաջարկ**

Միասնականացնել գրավոր պատասխան չներկայացնելու դեպքում կիրառվող իրավական հետևանքները և դրանց կիրառման չափանիշները: Սահմանել դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ:

## **ԳԼՈՒԽ 11. Վարչական դատավարությունում գործի վարույթի կասեցումը**

ՀՀ ՎԴՕ-ի 85-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատավարությունում գործի վարույթը կասեցնելու հիմքերի, ինչպես նաև կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո գործի վարույթը վերսկսելու վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

Հիշատակված իրավանորմի ուժով ՀՀ վարչական դատավարությունում գործի վարույթի կասեցման հարցերը լուծելիս ՀՀ ՎԴ-ը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխի կանոններով, որը կարգավորում է գործի վարույթի կասեցման, վերսկսման, գործի վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման հարցերը: Ուստի այնքանով, որքանով ՀՀ ՎԴ-ը ղեկավարվում է հիշատակված իրավանորմով, ապա դրանում առկա խնդիրները, բացերը վերաբերում են նաև վարչական դատավարությանը:

Տվյալ պարագայում առկա է հետևյալ խնդիրը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նշված իրավանորմի ուժով ստացվում է, որ բողոքարկվել կարող է միայն դատարանի գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը, իսկ գործի վարույթի կասեցումը մերժելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ կասեցումը մերժելու մասին որոշումը հնարավոր չէ բողոքարկել:

Ստացվում է, որ գործի վարույթի կասեցման դեպքում դատավարության այն մասնակիցը, որը այսպես ասած՝ «համաձայն չէ» գործի վարույթի կասեցման և այդ կապակցությամբ կայացված որոշման հետ, հնարավորություն ունի բողոքարկելու այդ որոշումը, իսկ դատավարության այն մասնակիցը, որը գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կասեցման, սակայն դատարանն այն չի կասեցրել, փաստորեն զրկված է գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորությունից:

Կարծում ենք՝ սա առնվազն արդար չէ և չի բխում կողմերի հավասարության, արդար դատաքննության սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից:

Ավելին՝ կարծում ենք, որ հիշյալ խնդիրն առավելապես հանդիսանում է օրենսդրի կողմից տվյալ դատավարական հարաբերության թերի կարգավորման արդյունք, որում հաշվի չի առնվել դատավարության մասնակիցների հավասարության, մրցակցային և արդար դատաքննության սկզբունքները:

Մասնավորապես՝

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահ-

պանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ ՎԴՕ-ի 5-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

### **Առաջարկ**

Օրենսդրորեն նախատեսել է գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորություն:

## **ԳԼՈՒԽ 12. Իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը ՀՀ վարչական արդարադատության բնագավառում**

Վարչական դատավարությունն առաջին հերթին ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Այս առումով ՀՀ վարչական արդարադատությունը չի ճանաչում հանրամատչելի գանգատը (acto popularis)՝ ամրագրելով միայն խախտված իրավունքների՝ անձնական շահագրգռվածությունից հետևող դատական պաշտպանություն հայցելու տարբեր հնարավորությունները:

Այս առումով, դիտարկման ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայցերի ընդունումը մերժվել է ՎԴ-ի կողմից այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայցադիմումում վիճարկվող ակտը, գործողությունը չի առնչվում կազմակերպության իրավունքներին ու պարտականություններին, հետևաբար կազմակերպությունը ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի կարգով չի հանդիսանում պատշաճ հայցվոր և դատարան հայց ներկայացնելու իրավունք չունի:

### **Օրինակ՝**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքի ավագանին իր՝ 23.04.2009թ.-ի թիվ 29 որոշմամբ որոշել է համաձայնություն տալ Վանաձորի համայնքի սեփականություն հանդիսացող Տարոն-3, ՔՀՀ-11 հասցեում գտնվող կիսակառույց ենթակայանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի էլեկտրական ցանցերին այն ավարտին հասցնելու, կահավորելու և նորաստեղծ թաղամասի անխափան էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով: Նույն որոշմամբ Վանաձորի համայնքի ավագանին որոշել է առաջարկել Վանաձորի համայնքի ղեկավարին կնքել համապատասխան մվիրատվության պայմանագիր:

Գտնելով, որ Վանաձորի համայնքի ավագանին իրավասու չէր կայացնելու նման որոշում, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպությունը դիմել է դատարան՝ Վանաձորի համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 29 որոշումն առջին ճանաչելու պահանջով:

ՀՀ ՎԴ-ի՝ 30.06.2009 թվականի թիվ ՎԴ 6/0250/05/09 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: Մերժելով հայցադիմումի ընդունումը՝ ՀՀ ՎԴ-ը, հղում կատարելով ՀՀ ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի առաջին մասին, գտել է, որ ներկայացված հայցադիմումում վեճի առարկան՝ Վանաձոր համայնքի ավագանու՝ 23.04.2009թ.-ի թիվ 29 որոշումը, որևէ ձևով չի առնչվում կազմակերպության իրավունքներին կամ պարտականություններին, հետևաբար վերջինս Օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգով պատշաճ հայցվոր չի հանդիսանում և Վարչական դատարանին նման հայց ներկայացնելու իրավունք չունի:

Կազմակերպությունը հետագայում Սահմանադրական դատարանում վիճարկել է ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո նրա արտահայտության Սահմանադրականությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ ի-

րավական դիրքորոշումը:

«Դիմումի ուսումնասիրության արդյունքներով ՍԴ-ն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է համայնքի բնակչի կողմից համայնքին պատկանող սեփականության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարանի մատչելիության իրավունքի հարցերը: Այս առումով հարկ է օրենսգրքի վիճարկվող արտահայտության սահմանադրականության հարցը դիտարկել օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթների համատեքստում՝ դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից»:

Սարգու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի սահմանադրականության հարցի վերաբերյալ ՀՀ ՍԴ-ն իր՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության դրույթների մեկնաբանությանը, ամրագրել է հետևյալը. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՀՀ ՍԴ-ի՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ ՍԴ-ն արձանագրում է, որ ՀՀ - Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են: Այս առումով ՍԴ-ն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ:

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսևորման տարբեր ձևեր: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Տվյալ դեպքում վկայակոչված գործառնության միջոցով դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլ նաև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ, կոնկրետ վերահսկողությունից զատ, նախատեսված է նաև վերացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել ևս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով ՍԴ- դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ ՍԴ կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից ՍԴ դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 101-րդ

հողվածի առաջին մասի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը դատարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ շահագրգիռ անձանց ներքո հանդես են գալիս նախ և առաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել: Միևնույն ժամանակ, մի շարք դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանել է նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը՝ որպես շահագրգիռ անձի իրավունք: Մասնավորապես, վերջինս վերաբերում է օրինական ներկայացուցչին:

Նշված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է սահմանափակ դեպքերում, նախատեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, որի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է:

ՀՀ ՎԴՕ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս և, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների առնչությամբ չի սահմանել ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, չսահմանափակվելով դիմողի դիրքորոշումներով՝ ՄԴ-ը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և հասարակության կյանքում:

Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, նախ՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, երկրորդ՝ հասարակական

կազմակերպություններն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի ու պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, երրորդ՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ ՍԴ-ը գտնում է, որ ՀՀ ՎԴՕ-ը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, ՍԴ-ը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումներին հնարավորություն է ընձեռվում հանդես գալու որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպա-



նությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է:

Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտված նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ.-ի թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկո-դար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրիուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են երաշխավորել դատական վերահսկողության մատչելիությունը նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանելու կոլեկտիվ կամ համայնքային շահեր:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

Նկատի ունենալով Սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ինչպես նաև՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված հանձնարարականի պահանջներն առ այն, որ ապահովվի կազմակերպությունների կամ անձանց հայց ներկայացնելու իրավունքը, եթե վարչական մարմնի որոշումը բացասաբար է ազդում համայնքի կամ հասարակության շահերին՝ պետք է նախատեսել հասարակական կազմակերպությունների հայց ներկայացնելու իրավունքը:

## **Առաջարկ**

Օրենսդրորեն ամրագրել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ հայց ներկայացնելու իրավունքը:

### ԳԼՈՒԽ 13. Վարչական դատարանի կողմից գործերի քննության արդյունավետությունը

Վարչական մարմինների որոշումների դատական վերանայումը պետք է լինի արդյունավետ, որպեսզի քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը իրական պաշտպանության ենթարկվեն՝ ապահովելով հասարակության վստահությունը, վարչական մարմինների գործունեության օրինականությունը: Վարչական դատարանի գերծանրաբեռնվածության պայմաններում դատական գործերի քննության և վարման ներկայիս պրակտիկական չեն ապահովում արդարադատության արդյունավետ իրականացումը, դատավորների միջև գործերի համաչափ բաշխվածությունը:

Դիտարկման արդյունքում բացահայտվեց դատական նիստերի անհիմն հետաձգումների միտում այն դեպքում, երբ դատարանը ծանրաբեռնված է բազմաթիվ հայցերով, որպիսի պայմաններում, անհրաժեշտ է կազմակերպել գործերի արդյունավետ և օպտիմալ վարում:

Դատավորները, որպես կանոն, հակված էին հետաձգելու գործի քննությունն անորոշ ժամկետով՝ առանց որևէ հիմնավորվածության:

#### Օրինակ՝

Դ. գործի քննությունը հետաձգվեց երեք անգամ մոտ երկու ամսով՝ առանց կողմերի նախնական ծանուցման. մի դեպքում դատավորը խորհրդակցության էր դատարանի նախագահի մոտ, մյուս դեպքում՝ սեմինարի էր մասնակցում, երրորդ անգամ՝ վատառողջ էր: Ամեն հաջորդ նիստին ներկայացած կողմերի թիվը պակասում էր՝ ի վերջո հանգեցնելով նրան, որ գործը քննվեց միայն երկուսի ներկայությամբ՝ որպես պատճառաբանություն ներկայացնելով նրանց պատշաճ ծանուցված լինելը:

Մյուս կողմից, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դատական գործերի քննությունը պարբերաբար հետաձգվում կամ տեղափոխվում էր առանց նախապես ծանուցելու դրա պատճառների մասին՝ այն հիմնավորմամբ, որ դատավորները մասնակցում են խորհրդաժողովների կամ դասընթացների, սակայն դատական նիստերի ժամանակացույցը փակցված էր լինում ցուցատախտակին:

Դատարանի որոշ դատավորներ (մասնավորապես՝ Ա. Առաքելյան, Ռ. Հակոբյան, Հ. Բեդկյան) ունենում էին գերծանրաբեռնված աշխատանքային օրեր, երբ նրանք նույնիսկ ընդմիջումը նվիրում էին գործի քննությանը: Սա ևս հանգեցնում էր գործերի քննության ժամկետների երկարաձգման, քանի որ դատավորները, իրենց վարույթում ունենալով բազմաթիվ գործեր, ստիպված էին ամեն հաջորդող նիստը նշանակել մեծ ընդհատումներով՝ ընդհուպ մինչև 1.5-2 ամիս անց: Մյուս կողմից նման իրավիճակը հանգեցնում էր դատավորի հոգնածության, ինչը կարող էր բերել գործի հանգամանքների ոչ ճիշտ ընկալման և գնահատման վտանգելով դատավարության արդյունավետությունն ու արդարացի վճռի կայացումը: Դատավորի հոգնածության պատճառաբանությամբ նույնիսկ մի քանի նիստեր տեղափոխվել են և նշանակվել այլ հերթի: Նման պայմաններում, փորձելով լրացնել բացը՝ հաճախ դատական նիստը տևում էր նախատեսվածից ավելի երկար՝ խաթարելով այլ դատական նիստի ընթացքը և ուշացումների պատճառ հանդիսանալով:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ մեծամասամբ դատական լուծումներն սկսվել են ուշացումներով: Իհարկե դրանց պատճառները լինում էին տարբեր. կողմի կամ կողմերի ուշացում, դատավորի ուշացում, նախորդող դատական նիստի երկարաձգում, տեխնիկական պատճառներ:

ՀՀ ՎՂԾ-ի 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով, առանց հետաձգումների:
2. Գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար սույն օրենսգրքով սահմանված են ժամկետներ:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիան դիտում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Եվրոպական դատարանը նշում է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ: «Ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում՝ դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից:

«Քաղաքացիական գործերով ժամանակի հաշվարկը սկսվում է հայցադիմումը վարույթ ընդունելու պահից, իսկ քրեական գործերով՝ մեղադրանք առաջադրելու պահից (տե՛ս «Դեվեյերն ընդդեմ Բելգիայի» գործը): Ժամանակի հաշվարկն ավարտվում է այն պահին, երբ ավարտվում է գործի քննությունը բարձրագույն դատական ատյանում, այսինքն, երբ ընդունվում է վերջնական դատական ակտ (տե՛ս «Սկոպելլիտին ընդդեմ Իտալիայի» գործը):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը յուրաքանչյուր դեպքում ներպետական վարույթի տևողության ողջամտությունը գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան՝ Դատարանը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառվում են բոլոր գործերի նկատմամբ: Մասնավորապես, Դատարանը հաշվի է առնում տվյալ դատական գործի բարդությունը, ինչպես դիմողի, այնպես էլ համապատասխան մարմինների այնպիսի վարքագիծը, որն ազդել է դատաքննության տևողության վրա, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվում է դատաքննությունը:

Ողջամիտ ժամկետի հետ կապված՝ Դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝

- գործի բարդությունը,

- դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները,
- համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը,
- դիմողի սեփական վարքագիծը:

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետա-  
յին է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է  
կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների  
հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին.  
հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թի-  
վը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավու-  
մը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն:

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը հաշվի է  
առնում նաև «ժամանակի և տարածության առումով այն հեռավորությունը,  
որ կա քննվող դեպքերի կամ փաստերի ու դատավարական գործընթացի  
միջև»:

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կա-  
րող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որո-  
շումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում,  
պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն):

Եվրոպական դատարանի նախադեպերը հաստատում են, որ քննու-  
յան ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշ-  
վի են առնվում միայն օբյեկտիվ պատճառներ: Իսկ մնացածը՝ դատարան-  
ների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձությունը, դատա-  
կան կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մե-  
ղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների  
վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն  
կարող:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 13.06.2006թ.-ի թիվ 98  
որոշման համաձայն՝ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավոր-  
ին սեղմ ժամկետում: Քաղաքացիական գործերով, մասնավորապես, գոր-  
ծի քննությունը պետք է ավարտվի մեկ դատական նիստի ընթացքում, եթե  
չկան ՀՀ քաղաքացիական դատավարության 119-րդ հոդվածով նախա-  
տեսված բացառիկ դեպքերը՝ գործի քննությունը հետաձգելու համար:

Վարչական դատարանում գործերի քննության պրակտիկան ցույց է  
տալիս, որ գործերի քննությունը բավականին երկար է տևում: Գործի  
քննությունը կարող է տևել մի քանի տարի կամ մի քանի ամիս, սակայն այդ  
ընթացքում կարող են նշանակված լինել երկու կամ երեք նիստեր: Գործերի  
քննության առավելագույն ժամկետների, «ողջամիտ ժամկետի» գնահատ-  
ման հստակ չափանիշների և այդ ժամկետների խախտման դեպքում անհ-  
րաժեշտ իրավական մեխանիզմների և պատասխանատվության միջոցնե-  
րի բացակայության պայմաններում դատական պրոցեսներն ընթանում են  
ժամանակային վերահսկողությունից դուրս՝ լիակատար անկանխատեսե-  
լիության պայմաններում:

05.03.2010թ.-ի ՎԴ 0683/05/10 վարչական գործով հայցը ընդունվել է վա-  
րույթ: Նշված գործով վճիռը հրապարակվել է 09.08.2010թ.-ին: Նշված գոր-  
ծով հրավիրվել են երեք դատական նիստեր՝ 27.05.2010թ.-ին,  
29.06.2010թ.-ին, 23.07.2010թ.-ին:

28.09.2009թ.-ի ՎԴ 6/0332/05/09 վարչական գործով հայցը ընդունվել է վարույթ: Նշված գործով վճիռը հրապարակվել է 10.11.2010թ.-ին: Նշված գործով հրավիրվել են երեք դատական նիստեր՝ 15.02.2010թ.-ին, 02.11.2010թ.-ին, 10.11.2010թ.-ին:

16.10.2009թ.-ի ՎԴ 4498/05/09 վարչական գործով հայցը ընդունվել է վարույթ: Նշված գործով վճիռը հրապարակվել է 25.05.2010թ.-ին: Ընդ որում, նշված գործով հրավիրվել են երկու դատական նիստեր՝ 21.12.2009թ.-ին և 10.05.2010թ.-ին:

Թիվ ՎԴ/3633/05/09 վարչական գործով հայցը վարույթ է ընդունվել 04.08.2009թ.-ին, նիստը նշանակվել է 03.11.2009թ.-ին, որից հետո նիստերը նշանակվել են հետևյալ պարբերականությամբ. 07.12.2009թ.-ին, 14.01.2010թ.-ին, 01.02.2010թ.-ին, 23.02.2010թ.-ին, 02.04.2010թ.-ին, 13.05.2010թ.-ին, 23.06.2010թ.-ին, 08.07.2010թ.-ին:

Թիվ ՎԴ/1229/05/09 վարչական գործով հայցը վարույթ է ընդունվել 16.03.2009թ.-ին, նիստը նշանակվել է 09.06.2009թ.-ին, որից հետո կայացել են նիստեր՝ 22.07.2009թ.-ին, 24.02.2010թ.-ին, 17.03.2010թ.-ին, 07.04.2010թ.-ին:

Հատկանշական է, որ դատական նիստերի օրերը որոշելու հարցում օբյեկտիվ չափանիշների պահպանման պրակտիկա դիտորդների կողմից չի արձանագրվել: Միմյանց հաջորդող դատական գործերով դատավորն առաջին գործով նիստ է նշանակել մեկ ամիս անց՝ վկայակոչելով դատարանի գերծանրաբեռնվածությունը և ազատ ժամերի բացակայությունը, երկրորդ գործով՝ երկու ամիս՝ դարձյալ նույն պատճառաբանությամբ, մինչդեռ երրորդ հաջորդող գործով՝ մեկ շաբաթ անց: Այս առնչությամբ տպավորություն էր ստեղծվում, որ դատավորները հակված էին իրականացնելու գործի արագ քննություն այն գործերով, որոնցով ունեին անձնական շահագրգռվածություն: Միաժամանակ, դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ վարչական մարմինների կողմից ներկայացված հայցերի քննությունն անհամեմատ ավելի արագ է ընթանում, քան մասնավոր սուբյեկտների հայցերի քննությունն ընդդեմ վարչական մարմինների, որը դարձյալ վկայում է գործերի վարման, դատական նիստերի նշանակման և այլ հարցերում օբյեկտիվ չափանիշների ու հստակ կանոնակարգերի բացակայության մասին:

Միաժամանակ, դիտարկումների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ ձգձգումներ, որոնց պատճառը հանդիսացել են կողմերի գործողությունները: Մասնավորապես, համաձայն ներկայացված աղյուսակի՝ կողմերը, պատշաճ ծանուցված լինելով նիստի ժամանակի և վայրի մասին դրանց մոտ 82 տոկոսի դեպքում, դրանց մեծ մասին չեն ներկայացել:

Հաշվի առնելով գործերի կարևորությունը և գործի փաստական հանգամանքները պարզելու անհրաժեշտությունը՝ այդ գործերի քննությունը կամ շարունակվել է կողմերից մեկի կամ մի քանիսի բացակայությամբ, կամ հետաձգվել է՝ ապահովելու վերջիններիս ներկայությունը: Նման վարքագիծ արձանագրվել է ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ պետական մարմնի ներկայացուցիչների կողմից:

Ընդհանուր առմամբ, նիստերին կողմերից որևէ մեկի բացակայության պատճառն անհայտ էր մնում, եթե կողմը կանխավ նիստի հետաձգման կամ գործն իր բացակայությամբ քննելու միջնորդությամբ հանդես չէր եկել:

Դատական նիստերի հետաձգման հայտնի պատճառներից են.

#### **Գործի նյութերին ծանոթանալը**

Մի շարք գործերի քննության ընթացքում կողմերը դատարանից ժամանակ են խնդրել գործի նյութերին ծանոթանալու համար: Դա պայմանավորված է եղել ինչպես հայցի հիմքի կամ առարկայի փոփոխությամբ, նոր ներկայացված ապացույցների ուսումնասիրությամբ, առարկություններ ներկայացնելու անհրաժեշտությամբ, ներկայացուցիչ ներգրավելու ցանկությամբ:

#### **Հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը**

Ուսումնասիրությունների արդյունքում եղել են դեպքեր, երբ հայցվորի կողմից մի քանի անգամ հայցի առարկայի և հիմքերի փոփոխություն է կատարվել:

Նույն հայցադիմումի քննության ընթացքում հայցվորի կողմից նախագահող դատավորին ինքնաբացարկի երեք միջնորդություն է ներկայացվել ցանկացած աննշան միջնորդության մերժման պայմաններում: Արդյունքում, հայցադիմումը, մի դատավորի վարույթից անցնելով մյուսի վարույթը, գործի քննությունը տևել է մոտ երկու տարի:

#### **Ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը**

Սույն հիմքով դատական նիստերի հետաձգումները պայմանավորված էին մասնավոր անձանց կողմից անհրաժեշտ ապացույցների ներկայացման հնարավորությունների սահմանափակումներով՝ պետական մարմինների կողմից իրենց տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող ապացույցները ներկայացնելուց խուսափելով: Արձանագրվել են դեպքեր, երբ պետական մարմին պատասխանողը բացահայտ ձևով հրաժարվել է հայցվոր կողմի պահանջները հիմնավորող ապացույցների ներկայացումից՝ ձգձգելով և խոչընդոտելով դատական քննության ընթացքը:

#### **Երրորդ անձ ներգրավելը**

Երրորդ անձի ներգրավումն առաջ էր բերում մի շարք դատավարական խնդիրներ: Նախ, ներգրավված երրորդ անձինք ժամանակ էին խնդրում գործի նյութերին ծանոթանալու համար, եթե երրորդ անձը ներգրավվում էր դատաքննության ավարտական փուլում, գործի քննության ժամկետները երկարում էին, քանի որ քննությունը մեծամասամբ սկսվում էր սկզբնական փուլից, և նույն պրոցեսը կրկնվում էր:

#### **Լիազորագրի ոչ պատշաճ լինելը**

Լիազորագրի ոչ պատշաճ լինելը նույնպես գործերի քննության հետաձգման պատճառ է հանդիսացել: Ոչ պատշաճությունն արտահայտվում էր ինչպես լիազորագրի ժամկետի անցմամբ, լիազորագրում նշված իրավունքների սահմանափակմամբ, այնպես էլ լիազորագրի մեջ չնշված անձի՝ դատական քննությանը ներգրավմամբ: :

## Առաջարկներ

1. Ապահովել ՎԴ-ում գործերի արագ և արդյունավետ վարումը և քննությունը՝ մեծացնելով ՎԴ-ի դատավորների թիվը:
2. Սահմանել գործերի քննության առավելագույն դատավարական ժամկետներ: Ժամկետի խախտումը պետք է հանդիսանա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:
3. Ձևավորել դատական նիստերի օրերի նշանակման միասնական չափանիշներ: Մասնավորապես, նիստերը պետք է նշանակվեն ըստ հայցերի մուտքագրման առաջնայնության: Առավել վաղ մուտքագրված գործերը պետք է ունենան առաջնայնություն առավել ուշ մուտքագրված գործերի համեմատ և այլն:

## ԳԼՈՒԽ 14. Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթը

ՀՀ ՎՊՕ-ի 135-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերով ՎՊ կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում ամրագրված իր իրավունքները:

2. Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերով ՎՊ կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի նորմատիվ ակտով խախտվել են պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի դեմ ՎՊ կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում ՎՊ կարելի է դիմել խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ 3-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց ժամկետային սահմանափակման:

Նշված հոդվածը նախատեսում է. որ նորմատիվ իրավական ակտի վիճարկման հայցով կարելի է դիմել դատարան խախտման պահից եռամսյա ժամկետում, այսինքն, այն պահից եռամսյա ժամկետում, երբ այդ նորմը կիրառվել է անձի հանդեպ: Այս պարագայում պրակտիայում ծագում է հետևյալ խնդիրը. եթե նորմատիվ ակտ է կիրառվել անձի նկատմամբ, որը մեկնաբանման խնդիր ունի, այսինքն ի սկզբանե հստակ չէ, արդյոք իսկապես իրավական ակտը հակասում է Սահմանադրությանը, թե՛ ոչ, ապա այս դեպքում, եթե անձն ընտրել է համապատասխան վարչական ակտը վիճարկելու ընթացակարգը, սակայն վերջնական դատական ակտով դատարանի կողմից նորմատիվ ակտի դրույթների մեկնաբանությունը չի համապատասխանում Սահմանադրությանը, ապա անձը բաց է թողել այս վարույթի կարգով նորմատիվ ակտը վիճարկելու պահանջ ներկայացնելու ժամկետը:

Հետևաբար, նորմատիվ ակտի դրույթի հակասությունը կարող է ի հայտ գալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում: Սակայն անձն այդ մեկնաբանությունը ունենալու պարագայում կարող է բաց թողած լինել նորմատիվ իրավական ակտի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ է օրենքներից բացի այլ նորմատիվ իրավական ակտերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին հակասելու վերաբերյալ պահանջ ներկայաց-



Ուելու համար այլ տրամաբանություն ընտրվել` հիմք ընդունվել խախտման պահը և ոչ թե վերջնական դատական ակտի գոյությունը: Հետևաբար, պետք է նախատեսել ժամկետի հաշվարկը խախտման պահից, իսկ եթե անձը որոշել է վիճարկել այն վարչական ակտը, որը կայացվել է վիճարկվող նորմատիվ ակտի հիման վրա, որպես այլընտրանք նախատեսել ժամկետի հաշվարկը վերջնական դատական ակտից հետո:

### Առաջարկ

Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթով նախատեսել ժամկետի հաշվարկը խախտման պահից` խախտման պահ համարելով անձի նկատմամբ այդ նորմի անմիջական կիրառումը, իսկ եթե անձը որոշել է վիճարկել այն վարչական ակտը, որը կայացվել է վիճարկվող նորմատիվ ակտի հիման վրա, որպես այլընտրանք նախատեսել ժամկետի հաշվարկը վերջնական դատական ակտից հետո:

## Գլուխ 15. Պատասխանատվությունը վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է պատասխանատվություն վարչարարությամբ պատճառված վնասի համար:

Օրենքի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն բաժնի դրույթներին համապատասխան: Ընդ որում, հատուցման ենթակա է և՛ ոչ իրավաչափ վարչարարության, և՛ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը: Ոչ իրավաչափ վարչարարության դեպքում վնասի հատուցման նախապայման է հանդիսանում վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչվելը: Ընդ որում, օրենքը սահմանել է վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար պարտադիր արտադատական կարգ՝ պահանջը պետք է ներկայացվի վարչական մարմին, հետո՝ դատարան:

Վնասի հատուցումն իրականացվում է երկու եղանակներով՝ վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով: Նշված հոդվածի մեկնաբանությունը վկայում է այն մասին, որ եթե վարչարարությամբ պատճառված վնասները վերացված են, օրինակ, օրինականացվել է անշարժ գույքը, որի համար դիմում էր ներկայացրել անձը և մերժում է ստացել, ապա կրած ծախսերի համար հատուցում, այսինքն, դրամական հատուցում անձը չի կարող ստանալ:

Օրենքում տրված ձևակերպումը վկայում է այն մասին, որ եթե վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացված են, ապա դրամական միջոցներով հատուցելու եղանակն անձը չի կարող օգտագործել: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես պետք է մեկնաբանել «վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնել» արտահայտությունը: Ոչ իրավաչափ վարչարարությամբ առաջացած հետևանքներն այն ծախսերն են, որոնք անձը կրում է ոչ իրավաչափ վարչարարության իրականացման պահից սկսած, և այն դրությունն է, որն առաջացնում է ոչ իրավաչափ վարչարարությունը: Այսինքն, վարչարարության հետևանքների վերացումն անձի համար նախկին դրության՝ մինչև իրավունքների խախտումն առկա դրության վերականգնումն է:

Ղատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գործերով, որոնցով ներկայացվել է վարչական մարմնի գործողության, անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչելու և դրա արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջ, հիմնականում մերժվում են:

ՎԴ/2164/05/09 վարչական գործով ներկայացված հայցադիմումի հիմքում դրվել են այն հանգամանքները, որ ներկայացված կատարողական թերթի հիման վրա կատարողական գործողություններն ամբողջական չեն կատարվել: Մասնավորապես, արգելանք է դրվել և աճուրդով վաճառվել պարտապանին պատկանող սրճարանը, սակայն հետագայում պարզվել է, որ պարտապանն ունեցել է նաև այլ գույք, որը հարկադիր կատարողն իր անփութության արդյունքում չի հայտնաբերել, իսկ պարտապանն օտարել է այն: Ղատարանը վճռով հաստատված է համարել, որ պարտապանն ունե-

ցել է գույք և դրամական միջոցներ, որոնք հարկադիր կատարողը պարտավոր էր առգրավել և իրացնել, մինչդեռ հարկադիր կատարողը 2006թ.-ից մինչև 2007թ.-ն ընկած ժամանակահատվածում պարտապանի գույքի և դրամական միջոցների առկայության պարագայում կատարողական վարույթի շրջանակներում դրսևորել է անգործություն, մասնավորապես, չի իրականացրել համապատասխան գործողություններ, որոնք ուղղված կլինեին գույքի առգրավմանն ու իրացմանը, պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին տեղեկություններ ստանալուն և հայտնաբերելուն:

Այսպիսով, դատարանը հաստատված է համարել, որ պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցը դրսևորել է ոչ իրավաչափ անգործություն, և այդ մասով հայցը բավարարել է: Սակայն դատարանը մերժել է հայցը ոչ իրավաչափ անգործությամբ պատճառված վնասի հատուցման մասով՝ պատճառաբանելով, որ հարկադիր կատարողը 03.04.2009թ.-ին արգելանք է դրել պարտապանին համասեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի վրա, այսինքն, շարունակում է գործողություններ իրականացնել պարտապանին պատկանող շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև դրամական միջոցների հայտնաբերման ուղղությամբ, ընդ որում, հայտնաբերվել է որոշակի գույք, որի իրացմամբ պահանջատերը հնարավորություն է ստանում իր պահանջը որոշակի չափով բավարարել և հաշվի առնելով նշվածը՝ դատարանը գտնում է, որ հարկադիր կատարողի անգործությունը չի հանգեցնում վնասի առաջացման, քանի դեռ հարկադիր կատարողը շարունակում է իրականացնել գործողությունները կատարողական թերթի պահանջները կատարելու ուղղությամբ, և այս պարագայում չի կարող խոսք լինել հայցվորին պատճառված վնասի՝ գույքի կորստի կամ վնասվածքի առաջացման մասին:

Մեկ այլ վարչական գործով՝ ՎԴ/2474/05/09 վարչական գործով հայցվորը ներկայացրել է ոչ իրավաչափ վարչարարության պատճառված վնասի հատուցման պահանջ՝ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ տեղեկատվություն է պահանջել պետական մարմնից, որը տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ: Ընդ որում հայցվորը ներկայացրել է դատական ակտ, որով հարցումը ուշացմամբ տրամադրելու հիմքով ձանաչվել է իր տեղեկատվության ազատության իրավունքի խախտումը: Հայցվորը վնասի հատուցման պահանջը ներկայացրել էր՝ հաշվի առնելով, որ ստիպված է եղել իր հարցմանն ուշ պատասխանելու համար կրել լրացուցիչ փոստային և այլ ծախսեր: Դատարանը վնասների հատուցման պահանջը մերժել է՝ հիմքում դնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածը, որի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը: Ըստ դատարանի՝ նշված նորմը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներին համապատասխան մեկնաբանելու դեպքում օրենսդիրը դրամական միջոցներով վնասի հատուցման պարտադիր պայման է համարում հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չլինելը, կամ հետևանքների վերացման համար ավելի մեծ ծախսերի անհրաժեշտությունը, քան պատճառված գույքային վնասը: Այսինքն, ամեն դեպքում, դրամական միջոցներով վնասի

հատուցումն օրենսդիրը կապում է ոչ իրավաչափ վարչարարության առաջացրած հետևանքների հետ, որոնք նշված գործով ըստ էության առկա չեն: ՀՀ ՎԴ-ի վճռով ամրագրված փաստը վերաբերել է այն հանգամանքին, որ հայցվորը հնգօրյա ժամկետում չի տեղեկացվել առ այն, որ տեղեկատվությունը տրամադրվելու է դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Միայն հարցման պատասխանն ուշ տրամադրելով՝ հայցվորին վնաս չի պատճառվել:

Փաստորեն, առկա կարգավորման շրջանակներում, վնասի հատուցումը պայմանավորվում է ոչ իրավաչափ վարչարարության առաջացրած հետևանքներով, դատարանի մեկնաբանությունից բխում է, որ եթե իրավունքի խախտումը վերացվել է, ապա անձի կրած ծախսերը ենթակա չեն հատուցման: Կարծում ենք, որ նման պրակտիկան չի բխում օրենքի պահանջներից:

Օրենքի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը: Կարծում են, որ դրամական միջոցներով հատուցման եղանակն այն դեպքում է կիրառվում, երբ իրավունքների վերականգնումն անհնար է, սակայն այս դեպքում ևս հատուցումը ներառում է անձի կրած ծախսերը:

### **Առաջարկ**

Ապահովել դատարանի կողմից վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ նորմերի կիրառումը և օրենքի պահանջներին համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը:

## Գլուխ 16. Վարույթը վճռաբեկ դատարանում

**ա. Վճռաբեկ դատարանը որպես վարչական արդարադատություն իրականացնող երկրորդ ատյան**

**բ. Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու պրակտիկայի ուսումնասիրություն**

ա. Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության՝ որպես ինքնուրույն ճյուղի ներմուծման պահից գործում էր արդարադատության երկաստիճան համակարգ: Այնուհետև, վճռաբեկ վարույթը կարգավորող նորմերը պարբերաբար փոփոխությունների ենթարկվեցին, ի վերջո ՀՀ օրենսդիրը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում որոշեց ներմուծել արդարադատության եռաստիճան համակարգ: Հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ ՎԴՕ-ի՝ վճռաբեկ վարույթի կարգավորմանը նվիրված բաժնի նորմերի զարգացմանը:

ՀՀ ՎԴՕ-ի 118-րդ հոդվածի առաջին մասը սկզբնական խմբագրությամբ նախատեսում էր, որ ՎԴ-ի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի և գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու վրա (*mutatis mutandis*) տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը և առանձին չէր կարգավորում վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, կարգը:

ՀՀ ՍԴ-ի՝ 25.11.2008թ.-ի թիվ 780-ՍԴՈ որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասը ձանաչվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ - հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր: ՀՀ ՍԴ-ը ներկայացրել էր հետևյալ պատճառաբանությունը. «Վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիությամբ և դրա արդյունավետությամբ, մասնավորապես, ՎԴ-ի դատական ակտերի բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ ատյանի մատչելիությամբ և արդյունավետությամբ»:

Սահմանադրական դատարանը նշել է, որ հարկ է համարում վարչական արդարադատության ոլորտում վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի մատչելիությունն ու արդյունավետությունն առաջին հերթին գնահատել ՎԴ-ի ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի և վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանների համատեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում, երբ վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործոնն էլ ավելի որոշիչ և էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի, այլ նաև մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության և արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Ըստ Սահմանադրական դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, հաշ-

